ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մարտի 2025 թվականի N 317-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N 596-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) որոշման N 1 հավելվածի 173-րդ կետը «շինարարական-մոնտաժային» բառերից հետո լրացնել «ու Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրամանով հաստատված ցանկում ներառված ներքին հարդարման» բառերով.

2) որոշման N 5 հավելվածում՝

ա. N 1-2 ձևը լրացնել հետևյալ բովանդակությամբ 20.1-ին կետով՝

«20.1. Ներքին հարդարման աշխատանքների

վերաբերյալ պահանջներ _____

(բազմաբնակարան շենքերի դեպքում նշվում են ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրամանով հաստատված ցանկում ներառված ներքին հարդարման աշխատանքների նախատեսման վերաբերյալ պահանջներ)»,

բ. N 3-2 ձևը «համարվում է ավարտված» բառերից հետո լրացնել «(այդ թվում՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրամանով հաստատված ցանկում ներառված ներքին հարդարման աշխատանքները)» բառերով,

գ. N 3-2-2 ձևի վերնագիրը «շինարարական աշխատանքների ավարտն» բառերից հետո լրացնել «(այդ թվում՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրամանով հաստատված ցանկում ներառված ներքին հարդարման աշխատանքներն)» բառերով և տեքստը «շինարարական աշխատանքներն ավարտված» բառերից հետո լրացնել «(այդ թվում՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրամանով հաստատված ցանկում ներառված ներքին հարդարման աշխատանքներն ավարտված)» բառերով:

2. Որոշման ամբողջ տեքստում «հաշմանդամ» բառն իր բոլոր հոլովաձևերով փոխարինել «հաշմանդամություն ունեցող անձ» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ճարտարապետա-հատակագծային առաջադրանք (նախագծման թույլտվություն) ստացած ծրագրերի վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

20.03.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ